# ՎԱՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՈՒՏԻԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՄՊՐԵՍԻՎ ԽՈՍՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

**Ն. Վ. Հունանյան**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոս

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** վաղ մանկական աուտիզմ (ՎՄԱ), իմպրեսիվ խոսք, իրականության համատեքստ, պասիվ բառապաշար, հաղորդակցման գործընթաց:

Հայտնի է, որ ՎՄԱ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի խանգարումները կարող են պայմանավորված լինել նաև խոսքի ընկալման դժվարութուններով: Հետևաբար, ՎՄԱ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքի որակական նկարագիրը պարզելու համար ՎՄԱ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքի հետազոտությունն իրականացնելիս մենք ուսումնասիրել ենք ձևաբանության ելակետ հանդիսացող բառի ընկալումն ըստ խոսքի հետևյալ մասերի՝ գոյական, բայ, ածական, կապ, դերանուն, թվական:

ՎՄԱ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքի հետազոտումը մեր կողմից իրականացվել է երկու եղանակով՝

✓ իրականության համատեքստում (երբ ՎՄԱ ունեցող երեխային, ով խաղում է օրինակ գնացքով, հրահանգ է տրվում՝ «Տո՛ւր գնացքը» կամ «Վերցրո՛ւ գնացքը» և այլն),

✓ իրականության համատեքստից դուրս (այս դեպքում ՎՄԱ ունեցող երեխային տրվում է այնպիսի հրահանգ, որն ընդհանրապես կապ չունի տվյալ պահին երեխայի կողմից կատարվող գործողության հետ, օրինակ՝ «Տո՛ւր խորանարդիկը», «Արի՛ այստեղ» և այլն) [2]:

Հայտնի է, որ իմաստային տեսակետից գոյական անունները չափազանց բազմազան են, բայց բոլորովին տարբեր իմաստ արտահայտող այս բառերը մեր գիտակցության մեջ միավորվում են մի կարգի տակ՝ իրենց արտահայտած ընդհանուր, այն է՝ առարկայական նշանակությամբ: Ըստ իմաստային այս կամ այն ընդհանրության՝ գոյական անունները կարելի է բաժանել բազմաթիվ խմբերի, բայց գոյականների՝ սոսկ իմաստի վրա հիմնված նման խմբավորումը քերականական արժեք չունի այնքանով, որքանով որ առանձնացված խմբերը չեն կարող բնորոշվել քերականական հատկանիշի յուրահատկությամբ [1, էջ 44]: Հետևաբար, ստուգելու համար ՎՄԱ ունեցող երեխաների կողմից առարկաներն ընկալելու կարողության աստիճանը, մենք հետազոտության շրջանակներում երեխաներին առաջարկել ենք տարբերակել տարբեր ընդհանրական իմաստ ունեցող (մրգեր, բանջարեղեն, հագուստ, սպասք, կենդանիներ, կահույք, գործիքներ, տրանսպորտ, սնունդ, երաժշտական գործիքներ, բնության երևույթներ, տեղանք, մարմնի մասեր,

երկրաչափական պատկերներ) 100 գոյական: Երեխաների կողմից նշված գոյականների ընկալման մակարդակների հետազոտումն իրականացվել է համապատասխան նկարների, բնական և արհեստական առարկաների ցուցադրման միջոցով՝ օգտագործելով «Ցո՛ւյց տուր» կամ «Տո՛ւր» հրահանգները:

Անցկացված հավաստող փորձարարական հետազոտության արդյունքները փաստեցին, որ ՎՄԱ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքը, ինչպես և ենթադրվում էր, բնութագրվում է բավականին ցածր մակարդակով: Հետազոտված երեխաների միայն 21,42%-ն (17 երեխա) էր ընկալում ցուցադրված գոյականների 15%-ը (15 գոյական) և, համապատասխանաբար, կատարում հրահանգը: Դրանք հիմնականում վերաբերում էին միրգ, բանջարեղեն և հագուստ հավաքական հասկացություններին: Երբեմն որոշ ՎՄԱ ունեցող երեխաներ նույնիսկ որպես խոսքային խթանում, վերարտադրում էին մրգերի, բանջարեղենի և հագուստի՝ իրենց հայտնի անունները (տրամագիր 1): Նշենք նաև, որ հետազոտմանը մասնակցած բոլոր 80 (100%) ՎՄԱ ունեցող երեխաներից և ոչ մեկը չկարողացավ ընկալել և տարբերակել ցուցադրված բոլոր 100 գոյականները:

«Գործողություն» բառը, տվյալ քերականական ըմբռնմամբ, շատ լայն բովանդակություն ունի. դրա տակ հասկացվում է ֆիզիկական, մտավոր ու հոգեկան գործունեություն, դրություն, դրության փոփոխություն և այլն, ինչպես՝ ջարդել, կտրել, մտածել, սիրել, հարգել, պառկել, մեծանալ և այլն [1, էջ 191]: Հետևաբար, անվանված գործողությունները (բայերը) երեխաների կողմից ընկալելու աստիճանը պարզելու համար մենք հետազոտվող ՎՄԱ ունեցող մի խումբ սովորողների հանձնարարել ենք համապատասխան նկարների միջոցով տարբերակել տարբեր իմաստ ունեցող 100 գործողություն՝ կիրառելով «Ցո՛ւյց տուր» հրահանգը: Հետազոտության արդյունքների վերլուծությունը փաստեց, որ ՎՄԱ ունեող երեխաների միայն 10,71%-ն (8 երեխա) էր ընկալում ցուցադրված 100 գործողությունների 8%-ը: Ընդ որում, հիմնականում տարբերակվում էին պարզագույն գործողությունները, ինչպես օրինակ՝ ուտել, խմել, քնել և այլն (տրամագիր 1): Այսպիսով, հետազոտմանը մասնակցած 80 (100%) ՎՄԱ ունեցող երեխաներից և ոչ մեկը չտարբերակեց ցուցադրված բոլոր 100 գործողությունները:

Ինչպես հայտնի է, հատկանիշի հասկացությունն իր մեջ ներառում է ամենատարբեր և բազմազան իմաստներ. գույն՝ սև, սպիտակ, կարմիր և այլն, մեծություն՝ մեծ, փոքր, տարածական և ժամանակային հարաբերություններ՝ լեռնային, գարնանային, նյութ՝ երկաթե, փայտե, ներքին և արտաքին հատկանիշներ՝ խելոք, բարի, հպարտ, հաստ, հին, նոր և այլն: Բայց այս ամենատարբեր և բազմազան իմաստ արտահայտող բառերը միավորվում են ածական անվան կարգի տակ՝ իրենց ամենաընդհանուր և հատկանշային նշանակություններով [1, էջ 125]: Ընդհանրացնելով վերոնշյալը՝ մենք հետազոտել ենք նաև ՎՄԱ ունեցող երեխաների կողմից առարկաների և հասկացությունների հատկանիշներն ընկալելու մակարդակը՝ հանձնարարելով «Ցո՛ւյց տուր» կամ «Տո՛ւր» հրահանգի միջոցով տարբերակել 100 ածական (մեծ, փոքր, երկար, կարճ, տաք, սառը, շատ, քիչ,

լիքը, դատարկ, ծանր, թեթև, հաստ, բարակ, վերև, ներքև, լայն, նեղ, գիշեր, ցերեկ, միացրած, անջատած, առաջին, վերջին, պինդ, փափուկ, հույզեր արտահայտող ածականներ՝ ուրախ, տխուր, բարկացած, զարմացած, հոգնած, վախեցած, նեղացած, ինչպես նաև գույներ և այլն): Հետազոտության արդյունքները փաստում են, որ ուսումնասիրվող ՎՄԱ ունեցող երեխաների 10.71%-ը (8 երեխա) տարբերակում էր առաջարկված ածականների 3%-ը, որոնք հիմնականում գույն էին արտահայտում (տրամագիր 1): Նշված 100 ածականի տարբերակում չդիտվեց հետազոտմանը մասնակցած 80 (100%) ՎՄԱ ունեցող երեխաներից ոչ մեկի կողմից:




*Տրամագիր 1. Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների կողմից խոսքի մասերն ընկալելու կարողության մակարդակը*

Մեր հետազոտության շրջանակներում խնդրո առարկայի շուրջ մենք հարկ ենք համարել ուսումնասիրել նաև ՎՄԱ ունեցող երեխաների կողմից դերանունների ընկալման կարողության մակարդակը: Հայտնի է, որ ժամանակակից հայերենի անձնական դերանունները (եզակի 1-ին դեմք-ես, ինքս, 2-րդ դեմք-դու, ինքդ, 3-րդ դեմք-նա, ինքը, հոգնակի՝ 1-ին դեմք-մենք, ինքներս, 2-րդ դեմք-դուք, ինքներդ, 3-րդ դեմք-նրանք, ինքները կամ իրենք) երբեմն կոչվում են նաև դիմային, որովհետև դեմք են ցույց տալիս: Սակայն բացի անձնական դերանուններից՝ հայերենում առանձնանում են դերանունների այլ տարատեսակներ՝ ցուցական (սա, դա, նա և այլն), փոխադարձ (միմյանց, իրար, մեկմեկու), հարցական (ո՞վ, ի՞նչ, ու՞ր, ինչպ՞ես, որտե՞ղ, ե՞րբ, քան՞իսը և այլն), հարաբերական (ով որ, ինչ-որ, երբ-որ և այլն), որոշյալ (ամեն(ը), ամեն մի, ամենքը և այլն), ժխտական (ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը), անորոշ (ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մի քանի և այլն) [1, էջ 161-168]:

Դերանունների ընկալման և տարբերակման ուղղությամբ հետազոտական աշխատանքները կատարվել են «Ցո՛ւյց տուր քո…», «Ցո՛ւյց տուր իմ…», «Ցո՛ւյց տուր նրա…», «Ցո՛ւյց տուր մեր…», «Ցո՛ւյց տուր նրանց…» հրահանգների օգնությամբ: Հետազո-

տության վերլուծությունը փաստեց, որ հետազոտվող երեխաների 7,14%-ը (5 երեխա) տարբերակում էր միայն «քո» դերանունը (տրամագիր 1):

Մենք կարևորել էինք նաև պարզել, թե ՎՄԱ ունեցող երեխաները որքանով են ընկալում կապ խոսքի մասը: Հետազոտվող ՎՄԱ ունեցող երեխաների 3,57%-ը (2 երեխա) վրա, տակ, մեջ, մոտ, կողքը, առջևում, ետևում, արանքը, վերևում, ներքևում կապերից տարբերակում էր միայն «վրա» կապը (տրամագիր 1): Այստեղ ևս ակնհայտ երևում է, որ հետազոտվող ոչ մի ՎՄԱ ունեցող երեխա չէր կարողանում ընկալել և տարբերակել նշված բոլոր (100%) կապերը:

Մեր կողմից հետազոտվել է նաև 1-50-ի սահմանում ՎՄԱ ունեցող երեխաների կողմից քանակական թվականների ընկալման ու տարբերակման կարողությունների մակարդակը: Հետազոտմանը մասնակցած ՎՄԱ ունեցող բոլոր երեխաների կողմից թվականների տարբերակումը, հետևաբար, նաև՝ թվաբանական գործողությունների (գումարում, հանում, հավասար) կատարման կարողությունները բացակայում էին:

Այսպիսով, ուսումնասիրելով ՎՄԱ ունեցող երեխաների իմպրեսիվ խոսքը՝ բացահայտեցինք, որ այս երեխաների հաղորդակցման գործընթացը մեծապես տուժում է ոչ միայն դրա նկատմամբ ցանկության բացակայության, այլև նրանց իմպրեսիվ խոսքում առկա մի շարք դժվարությունների հետևանքով: Մասնավորապես, նրանք դժվարանում են ընկալել և տարբերակել տարբեր իմաստներ արտահայտող առարկաները, գործողությունները, դերանունները, կապերը, թվերը, առարկայի հատկանիշները: Հաճախ նույնիսկ սահմանափակ թվով ընկալված բառերը ՎՄԱ ունեցող երեխաները այնուամենայնիվ, ենթատեքստում չեն ընկալում և չեն հասկանում:

Հիմք ընդունելով նշված հանգամանքները՝ կարող ենք ասել, որ ակնհայտ դիտվող աղքատիկ կրավորական բառապաշարը կարող է պատճառ հանդիսանալ ՎՄԱ ունեցող երեխաների կլինիկական պատկերի և արտաքին աշխարհի հետ ունեցած հարաբերությունների անջրպետի խորացման՝ դրանով սահմանափակելով շրջապատող մարդկանց հետ իրականացվող հաղորդակցման գործընթացը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Մ. Ե. Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն: Երևան, 2004:

2. Никольская О. С., Баенская Е. Р., Либлинг М. М. ,Аутичный ребенок. Пути помощи. Москва, Теревинф 2006.

## РЕЗЮМЕ

## ОСОБЕННОСТИ ИССЛЕДОВАНИЯ ИМПРЕСИВНОЙ РЕЧИ У ДЕТЕЙ С РАННИМ ДЕТСКИМ АУТИЗМОМ

**Н. В. Унанян**

преподаватель кафедры логопедии и восстановительной терапии
Армянского государственного педагогического университета
имени Хачатура Абовяна

В статье представленны особенности результатов импрессивной речи у детей с ранним детским аутизмом. Для максимальной самостоятельности и интегрирования в общество необходим определенный уровень навыков общения, который невозможен без развития импресивной речи у детей с ранним детским аутизмом.

## SUMMARY

## FEATURES OF STUDY OF IMPRESIVE SPEECH OF CHILDREN WITH AUTISM

**N. V. Hunanyan**

lecturer at the Chair of Speech and Rehabilitation therapy Khachatur Abovyan
Armenian State Pedagogical University

Specifications are represented in the article which is identifying features of speech of children with early autism. A certain level of communication skills is needed for maximum independence and integration in the society, which is impossible without the development of impression speech of children with autism.